

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ս Պ Ի Ր Ք

ՀԱՏՎԱԾ I

ԳԼՈՒԽ 15.1

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱՆՏՈՒՄՆԵՐ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հոդված 213.2 Նյութական պահուստի օրենսդրության պահանջների խախտումը

1. Պետական պահուստի նյութական արժեքների պակասորդի կամ հնրնական օգտագործման հայտնաբերումը պահպանող կազմակերպության համար առաջացնում է նախազգուշացում:
  2. Պետական պահուստի նյութական արժեքների պակասորդի կամ հնրնական օգտագործման հայտնաբերման պահից 30 օրվա ընթացքում պետական պահուստում պակասորդը չվերականգնելը պահպանող կազմակերպության համար առաջացնում է տուգանք՝ պակաս կամ հնրնական օգտագործված ապրանքների արժեքի 10%-ի չափով, իսկ 60 օրվա ընթացքում պետական պահուստում չվերականգնելը՝ 100%-ի չափով:
  3. Պահպանող կազմակերպության կողմից պետական պահուստի նյութական արժեքների փչացումը կազմակերպությանը համար առաջացնում է նախազգուշացում:
  4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված նախազգուշացումից հետո 30 օրվա ընթացքում փչացած նյութական արժեքների լրիվ փոխարինումը չկատարելը կազմակերպության համար առաջացնում է տուգանք՝ փչացած ապրանքների արժեքի 10%-ի չափով, իսկ 60 օրվա ընթացքում փչացած նյութական արժեքների լրիվ փոխարինումը չկատարելը՝ փչացած ապրանքների արժեքի 100%-ի չափով:
  5. Զորահավաքային պահուստ ձևավորելու առաջադրանքը, հնչպես նաև ռազմավարական պաշարների պահուստի կուտակումը սահմանված ժամկետներում չկատարելը կազմակերպության համար առաջացնում է նախազգուշացում:
  6. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված նախազգուշացումից հետո 30 օրվա ընթացքում առաջադրանքը չկատարելը կազմակերպության համար առաջացնում է տուգանք՝ չկուտակված ապրանքների արժեքի 10%-ի չափով, իսկ 60 օրվա ընթացքում առաջադրանքը չկատարելը՝ չկուտակված ապրանքների արժեքի 100%-ի չափով:
  7. Զորահավաքային կամ ռազմավարական պաշարների պահուստի պակասորդի կամ հնրնական օգտագործման հայտնաբերումը կազմակերպության համար առաջացնում է նախազգուշացում:
  8. Նյութական արժեքների հնրնական օգտագործման կամ պակասորդի համար հնրնական օգտագործման կամ պակասորդի հայտնաբերման օրվանից 30 օրվա ընթացքում դրանք պետական պահուստում չվերականգնելը կազմակերպության համար առաջացնում է տուգանք՝ հնրնական օգտագործված կամ պակաս ապրանքների արժեքի 10%-ի չափով, իսկ 60 օրվա ընթացքում չվերականգնելը՝ 100%-ի չափով:
  9. Զորահավաքային պահուստում հաստատված անվանացանկին, տեխնիկական պայմաններին և սահմանված որակական հատկանիշներին չհամապատասխանող ապրանքներ ամբարելու և (կամ) պահելը, հնչպես նաև ապրանքների պահպանման ժամկետները գերազանցելը կազմակերպության համար առաջացնում է նախազգուշացում:
- Սույն հոդվածի 9-րդ մասով նախատեսված նախազգուշացումից հետո 30 օրվա ընթացքում համապատասխան նյութական արժեքներ չամբարելը կազմակերպության համար առաջացնում է տուգանք՝ այն ապրանքների արժեքի 10%-ի չափով, որոնց մասով թույլ են տրվել այդ խախտումները, իսկ 60 օրվա ընթացքում համապատասխան նյութական

Formatted: Font: (Default) Arial Unicode, 11 pt, Not Bold

[արժեքներ չամբարելը՝ այն ապրանքների արժեքի 100% չափով, որոնց մասով թույլ են տրվել այդ խախտումները](#)

**Հոդված 230. Առողջապահական տեսչական մարմինը  
(վերնագիրը խմբ. 21.03.18 ՀՕ-173-Ն)**

1. Սույն օրենսգրքի 42-րդ, 42.1-43-րդ, 45-47.13-րդ, 80-86-րդ (եթե դրանք համարվում են մթնոլորտային օդի պահպանության սանիտարահիգիենիկ կանոնների և նորմերի խախտումներ), 87-րդ (առողջապահական տեսչական մարմնի կարգադրագրերը չկատարելու համար), 96.1-ին, 152-րդ հոդվածներով, 158-րդ հոդվածի 19-րդ մասով, [173.3-րդ և 213.2-րդ հոդվածներով](#), նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Առողջապահական տեսչական մարմինը:

Deleted: 173.3-րդ հոդվածով

(230-րդ հոդվածը փոփ. 14.06.94 ՀՕ-105, 26.12.02 ՀՕ-499-Ն, 25.12.03 ՀՕ-31-Ն, 14.12.04 ՀՕ-187-Ն, 24.03.05 ՀՕ-78-Ն, լրաց. 06.12.07 ՀՕ-296-Ն, փոփ. 18.03.08 ՀՕ-8-Ն, 24.06.10 ՀՕ-118-Ն, խմբ. 21.03.18 ՀՕ-173-Ն)

**Հոդված 238<sup>2</sup>. Սննդամթերքի անվտանգության բնագավառում պետական վերահսկողություն իրականացնող պետական լիազորված մարմինը**

Սննդամթերքի անվտանգության բնագավառում պետական վերահսկողություն իրականացնող պետական լիազորված մարմինը քննում է սույն օրենսգրքի 158 հոդվածի առաջին, երկրորդ, երրորդ, հինգերորդ, վեցերորդ, տասնմեկերորդ, տասներեքերորդ, տասնչորսերորդ, քսանհինգերորդ, քսանութերորդ, քսանիններորդ, երեսուներորդ և երեսունհինգերորդ մասերով, 182<sup>2</sup>, [188-րդ և 213.2-րդ](#), հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Deleted: և 188

Սույն հոդվածի առաջին մասում նշված մարմնի անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննելու և վարչական տույժեր նշանակելու իրավունք ունեն գյուղատնտեսության ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի կազմում գործող համապատասխան պետական տեսչության պետը և տարածքային մարմինների ղեկավարները:

(238<sup>2</sup> - րդ հոդվածը լրաց. 27.11.06 ՀՕ-194-Ն, փոփ. 20.05.09 ՀՕ-131-Ն, խմբ. 07.02.12 ՀՕ-17-Ն, փոփ. 20.11.14 ՀՕ-182-Ն, 17.11.17 ՀՕ-215-Ն)

**Հոդված 244.7. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը  
(վերնագիրը փոփ. 11.09.12 ՀՕ-179-Ն, խմբ. 01.03.17 ՀՕ-75-Ն)**

1. Սույն օրենսգրքի 95.3-րդ հոդվածով, 158-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 23-րդ, 24-րդ և 26-րդ մասերով, 188-րդ հոդվածով (բացառությամբ 5-րդ մասի), [189.1-ին հոդվածի 1-4-րդ մասերով և 213.2-րդ հոդվածով](#), նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Շուկայի վերահսկողության տեսչական մարմինը:

Deleted:

Deleted: և 189.1-ին հոդվածի 1-4-րդ մասերով

2. Սույն օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով, 158-րդ հոդվածի 28-րդ մասով, 169.25-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարը կամ նրա կողմից լիազորված Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի պաշտոնատար անձը (անձինք):

(244<sup>7</sup> - րդ հոդվածը լրաց. 28.04.98 ՀՕ-212, 11.12.02 ՀՕ-495-Ն, 11.12.02 ՀՕ-496-Ն, խմբ. 16.12.05 ՀՕ-262-Ն, 27.02.07 ՀՕ-134-Ն, փոփ. 06.12.07 ՀՕ-296-Ն, 12.09.08 ՀՕ-142-Ն, փոփ., լրաց. 11.09.12 ՀՕ-179-Ն, լրաց. 17.12.14 ՀՕ-247-Ն, 29.06.16 ՀՕ-124-Ն, խմբ. 01.03.17 ՀՕ-75-Ն)